

ԱՐՑԱԽԻ ԱՁԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Սովորաբար գրականության մեջ արցախյան ազատագրական շարժման մասին խոսելիս, հիմնական շեշտը դրվում է 20-րդ դարի վերջերին ծավալված պայքարի վրա: Որպես արցախյան դարավոր ազատագրական շարժման վերջին պոռթկում, անշուշտ անկախությունը վերականգնելու և մայր հայրենիքի հետ վերամիավորելու համար մղվող պայքարը ճակատագրական նշանակություն ունի Արցախի համար: Սակայն արցախյան ազատագրական պայքարի արմատները ձգվում են դարերի խորքեր, միահյուսվում հայ ժողովրդի դարավոր պայքարին:

Արցախը քրիստոնեության տարածման և հայկական մշակույթի զարգացման հնագույն օջախներից մեկն է: Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնադրված Ամարասի եկեղեցին ամբողջ Աղվանքի հոգևոր կենտրոնը դարձավ: Մերոպագիր առաջին դպրոցներից մեկը, որը բացվեց Ամարասում, զորեղ միջոց հանդիսացավ քրիստոնեական կրոնն ու գաղափարախոսությունը Հայաստանում ամրապնդելու գործում:

Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի առաջին շարքերում էին Արցախի, Ուտիքի, Սյունիքի լեռնականները: Արաբական տիրապետության ժամանակ Արցախը բազմիցս ապստամբեց նրանց դեմ, գլխավորելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը 9-10-րդ դարերում: Արցախի, Խաչենի, Փառիսոսի, Դիզակի իշխանական տները Բագրատունիների հետ միասին պայքարում էին ազգային պետության վերականգնման համար: Ունենալով որոշ ներքին ինքնուրույնություն Արցախի հայ մելիքները 18-րդ դարի սկզբներից դարձան հայ ժողովրդի ազատագրական շարժման ղեկավարները:

Թուրքիայի կողմից հրահրվող լեռնայինների արշավանքների դեմն առնելու նպատակով Արցախում ստեղծվեց պայքարի միասնական կենտրոն, որը կոչվեց սզնախ: Մեծ սզնախի ղեկավարն Գանձասարի

կաթողիկոս Եսայի Յասան Ջալալյանը, փոքր սզնախինը՝ Ավան հայրապետը: Շուտով Արցախի բոլոր գավառներում ստեղծվում են սզնախներ, որտեղ համախմբում էին տվյալ վայրի բնակիչներին:

Սզնախները համաժողովրդական պայքար էին մղում թուրք-պարսկական զավթիչների դեմ: Ավելին, օգնության ձեռք էին մեկնում Յայաստանի մյուս վայրերում մղվող պայքարին: Այսպես, 1724 թ. Ավան հայրապետը օգնության հասավ Սյունիքի ազատամարտիկներին և համատեղ ուժերով պարսիկներին դուրս մղեցին երկրից:

Արցախի ազատագրական պայքարը նոր փուլ թևակոխեց կապված Ռուսաստանի արևմտյան քաղաքականության աշխուժացման հետ: Իր տիրապետությունն Արևելքում ամրապնդելու նպատակով, Ռուսաստանը մի կողմից սուտ խոստումներ էր տալիս հայ և վրաց ազատամարտիկներին, մյուս կողմից՝ գաղտնի պայմանագիր կնքում Թուրքիայի հետ: Այդ երկդիմի քաղաքականության հետևանքով պայքարի ելած հայ զինվորականությունը միայնակ մնաց պարսիկների և լեզգիների դեմ: Իսկ թուրքերը օգտվելով ռուսների հետ կնքած պայմանագրից մեծ ուժերով հարձակվեցին Յայաստանի վրա, գրավեցին ու ավերեցին երկիրը: Սակայն Ղարաբաղի վրա թուրքերի հարձակումը հաջողություն չբերեց: Նրանք հերոսաբար կռվում էին Թուրքիայի դեմ արգելափակելով նրանց հետագա առաջընթացը: Այս պայքարի ծանր օրերին մահացավ Եսայի Յասան-Ջալալյանը (1728), ապա հետագա դիմադրությունը համարելով անհուսալի՝ Ավան հայրապետը իր համախոհներով անցավ Ռուսաստան: Արցախից սկսված զանգվածային արտագաղթը շատ ծանր անդրադարձավ պայքարի վրա: Պարսկաստանի ուժեղացման հետ մեկտեղ շուտով սրվեցին թուրք-պարսկական հարաբերությունները, որի ժամանակ Ղարաբաղի մելիքները մերձեցան Նադիր շահի հետ և պայքարեցին թուրքերի դեմ: Արցախի մելիքների ակտիվ պայքարի շնորհիվ 1786 թ. պարտության մատնված Թուրքիան Արևմտյան Յայաստանը հանձնեց պարսիկներին:

Այդ ժամանակ Արցախում ձևավորվեց Խամսայի մելիքությունը, որը փաստորեն հայկական ֆեոդերատիվ պետության վերածման փորձ էր: Մելիք Եգանը, որը գլխավորում էր Խամսայի մելիքությունը, փաստորեն իր վրա էր վերցրել համահայկական հոգսերը, Խամսայի մելիքությունը տասնամյակներ շարունակ դարձավ հայ ազատագրական շարժման նոր հանգրվանը, ամրապնդելով՝ ազգային միավորման գաղափարը:

Դա դարձել էր ուժ, որը հաշվի էր առնում ժամանակի հայ հասարակական-քաղաքական գաղափարները: Ավելին, քանի որ հայերի մոտ պետական այլ միավորում չկար, ուրիշ երկրներ նույնպես, օրինակ Ռուսաստանը, հարաբերություններ էին հաստատում Խամսայի մեկիքության հետ, որը հանդես էր գալիս ամբողջ հայ ժողովրդի ամունից:

Ղարաբաղյան մեկիքների տասնամյակներ մղած հերոսական պայքարի շնորհիվ, հայ ազատագրական շարժումը կողմնորոշվեց դեպի Ռուսաստան: Դա տվյալ պայմաններում միակ ճիշտ կողմնորոշումն էր: Ղարաբաղի մեկիքների կիսանկախ վիճակը, նրանց ռազմական ուժը Արցախը դարձնում էր հայ ազատագրական շարժման հիմնական կենտրոնը: Արցախյան ազատագրական պայքարի պայմանները միաձուլվում էին հայ ազատագրական շարժման դարավոր ընթացքին:

Միջնադարյան Արցախը առաջավոր դեր էր խաղում նաև հայկական մշակույթի զարգացման գործում: Ամարասի, Գոշավանքի, Դադիվանքի, Գանձասարի, Շուշիի եկեղեցիներն ու ամրոցները հայ մշակույթի խոշոր կենտրոններ էին: Հայ մեկիքները տարբեր նվաճողներից գնում էին հայկական ձեռագրեր և կտակում եկեղեցիներին: Հայ ճարտարապետության զարգացման խոշոր լծակներ էին Արցախի միջնադարյան ճարտարապետական հուշարձանները: Պատահական չէ, որ հայոց հնագույն խաչքարը (853 թ.) գտնվում է Արցախում:

Ստանձնելով համահայկական ազգային ազատագրական պայքարի առաջնորդի դերը, արցախահայությունը ակտիվ մասնակցում էր հայերի դեմ ուղղված բոլոր պատերազմներին: Նրանք գործում մասնակցություն ունեցան հայդուկային շարժմանը: Նշանավոր հայդուկ դեկավարներից էին Ն. Դումանը, Թորգոմը, Գաբրիել Կաֆյանը, Ալ. Մանուկյանը և շատ ուրիշներ: Արցախցի հայդուկներն ու հայդուկապետը օրինակ էին ծառայում պայքարի տարբեր ոլորտներում: Արցախցիների ակտիվ մասնակցությունը Բաքվի հայ-թուրքական ընդհարումներին վճռական նշանակություն ունեցավ: Թալանի ծարավ թուրքերը հարձակվել էին հայկական բնակավայրերի վրա: Արցախի ազատամարտիկները Շուշիից մինչև Բաքու ու Գանձակ կազմակերպված ջոկատներով կռվում էին թուրքերի դեմ, կանխում նրանց վայրագությունները:

1917 թ. հոկտեմբերից հետո Անդրկովկասի քաղաքական քարտեզի վրա գծագրվեց թուրքերից կազմված մի նոր պետություն՝ Ադրբեջանը, որը ազգային, պետական ավանդույթներ չուներ: Այն ստեղծվեց պան-

թուրքիզմի շահանկատ ծրագրերից ելնելով: Այն հիմնականում ուղղված էր հայ ժողովրդի դեմ և առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի դեմ:

1918 թ. հուլիսին դաշնակցության կողմից հրավիրված համագումարը Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախ և ընտրեց Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդ, որը լիազորված էր պաշտպանելու արցախահայության անկախությունը: Սակայն թուրքական մեծաքանակ զորքերը մտան Ղարաբաղ և չնայած ժողովրդի հերոսական դիմադրությանը գրավեցին Շուշին: Արցախցիների կազմակերպած հերոսական պայքարի շնորհիվ՝ 1918 թ. հոկտեմբերին Մսմնա գյուղի մոտ ջախջախեցին թուրքերին:

Համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո Անդրկովկասում նրանց փոխարինեցին անգլիացիները, որոնք նույնպես պաշտպանում էին Ադրբեջանի շահերը: Արցախցիները փոքրաթիվ ուժերով շարունակում էին դիմադրություն ցույց տալ թուրքերին ու անգլիացիներին: 1920 թ. ապրիլի 25-ին Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը, կազմեց Արցախի ժամանակավոր կառավարություն, միաժամանակ որոշելով «հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս»: Սա արցախահայության դարավոր երազանքն էր: Սակայն դեպքերի հետագա զարգացումը նպաստավոր չեղավ արցախյան ազատագրական պայքարի համար: 1920 թ. Ադրբեջանում հաստատված խորհրդային կարգերը նոր արհավիրքներ բերեցին Արցախին: Բոլշևիկ դարձած թուրքերը այժմ փորձում էին իրենց տարածքային հարցերը լուծել Ռուսաստանի օգնությամբ: Իսկ վերջիններս ամեն ինչ անում էին դաշնակցական Հայաստանի տարածքները պոկելու և խորհրդային Ադրբեջանին հանձնելու համար:

1920 թ. մայիսին 11-րդ բանակը մտավ Շուշի, և Արցախը հայտարարվեց Ադրբեջանի մաս: Ռուսաստանը դիմում էր ամենաստոր քայլերի Արցախը մասնատելու, Ադրբեջանին միավորելու համար:

1921 թ. հունիսի 5-ին, Կովբյուրոյի ապօրինի որոշմամբ, Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: Մոսկվան Ադրբեջանի նավթի համար զոհաբերեց հայ ժողովրդի շահերը: Արցախահայությունը չընդունեց այդ որոշումը և առաջին օրվանից պայքարեց դրա դեմ: Իսկ Ադրբեջանի իշխանությունները պատժիչ ջոկատներ տեղադրեցին Արցախում և լայն

պայքար սկսեցին հայերին այնտեղից արտամղելու համար:

Երկար պայքարից հետո որոշում ընդունվեց (1923 թ.) Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ ստեղծելու մասին: Ադրբեջանի իշխանությունները անջատեցին Լաչինի շրջանը՝ ստեղծելով Քուրդիստանի գավառ, որով փաստորեն ԼՂԻՄ-ն լիովին մեկուսացվեց, զրկվեց Հայաստանի հետ կապ ունենալուց: Արցախից անջատվեցին և Ադրբեջանին միացվեցին մի շարք հայկական գյուղեր (միայն Գյուլիստանի գավառից 107 գյուղ): Այդ վերածնունդների արդյունքում պատմական Արցախի 11,5 հազար ք. մ. տարածքից մնացել էր 4,4 հազար ք. մ.:

Արցախում ամրապնդելով իրենց իշխանությունը և ԽՍՀՄ-ից ստանալով բազմակողմանի օժանդակություն Ադրբեջանի ղեկավարները սկսեցին վարել բացահայտ հակահայկական քաղաքականություն: 1920-ական թթ. անցնելով նոր տնտեսական քաղաքականության (ՆԵՊ)՝ գյուղացիությանը պետք է հողաբաժիններ տրվեր, ադրբեջանցիներն Արցախում մոտ 5 անգամ շատ հող ստացան, քան՝ հայերը: Վերջիններիս զգալի մասը մնաց հողազուրկ: Նույն խտրական և հալածական քաղաքականությունն էր տիրում նաև հետագայում: Գյուղի կոլեկտիվացման շրջանում Բաքվի իշխանությունները ԼՂԻՄ-ում գյուղացիական լավագույն տնտեսությունների ջարդ կազմակերպեցին: Կուլակաթափման անվան տակ ունեզրկեցին միջակ գյուղացիության մեծ մասին, իսկ որևէ դժգոհություն հայտնողները աքսորվում էին հեռավոր շրջաններ: Հայկական շրջանները մի քանի անգամ քիչ մեքենաներ և գյուղատնտեսությանը սպասարկող նյութեր էին ստանում, քան ադրբեջանական շրջանները: Պետության կողմից չէին վերանորոգվում ջրանցքները, առուները, հողաշինարարական որևէ աշխատանք չէր տարվում: Քոչվոր թուրքերի հոգեբանությամբ ամեն միջոցի դիմում էին հայերին երկրամասից արտաքսելու համար: Արցախցիների լուռ դժգոհությունը երբեմն պռոթվումներ էր ունենում, որոնք որակվում էին որպես նացիոնալիզմ և դաժան հալածվում Ադրբեջանի իշխանությունների կողմից: Այդ քաղաքականությունը ցայտուն դրսևորվեց հայրենական պատերազմի տարիներին: Օգտագործելով հարմար պահը՝ պատերազմի զորահավաքը հիմնականում կատարվում էր հայերի հաշվին: Լեռնային Ղարաբաղից պատերազմի տարիներին զորակոչվել է 45 հազար մարդ (բնակչ. 1/3), այն դեպքում, երբ ադրբեջանցիներից զորակոչվել է 17-ից մեկը: Սակայն հայ ժողովրդի զավակները պատերազմին հերոսաբար

մասնակցեցին, կանխելով Թուրքիայի Անդրկովկասի վրա հարձակման վտանգը, որը կարող էր նոր եղեռնի տեղիք տալ: Արցախը պատերազմին տվեց 3 մարշալ, 30-ից ավելի գեներալ և 24 Խորհրդային Միության հերոս: Ադրբեջանի ոչ մի մարզ չէր կարող մրցել Արցախի հետ:

Ադրբեջանի իշխանությունները ավելի լկտիացան հետպատերազմյան շրջանում: 1950-70 թթ. տնտեսությունները խոշորացնելու պատրվակով հայկական գյուղերից խլվեցին ընդարձակ տարածություններ և հանձնվեցին ադրբեջանցիներին: Արցախի բարձրադիր գոտիներում ստեղծվեցին ժամանակավոր ամառանոցներ (յալլաղներ), որոնք շուտով դարձան մշտական գյուղեր: Գողի պես քայլ առ քայլ բարձրանալով հայկական լեռները, ադրբեջանցիները սկսեցին սահմանափակել հայկական գյուղերի տարածքները, ճանապարհները, ջրերը: Այս բոլորի հետևանքով հայերը հաճախ մեկնում էին արտագնա աշխատանքի, նույնիսկ աշխատում էին ադրբեջանական գյուղերում: Իշխանություններն ամեն ինչ անում էին հայկական գյուղերի վիճակը ծանրացնելու համար: 1986 թ. Ադրբեջանի մեկ շնչին ընկնում էր 473 ռ. կապիտալ ներդրում, Նախիջևանում՝ 392, իսկ ԼՂԻՄ-ում՝ 181 ռուբլի: Ծանր էր հայկական դպրոցների վիճակը: Դրանք մեծմասամբ 20-30-ական թթ. կառուցված շենքեր էին, որոնք չէին վերանորոգվել և պիտանի չէին ուսումնական աշխատանքների համար: Մինչև 1970 թ. մարզում հայկական դպրոց չէր կառուցվել: Չկային մանկավարժներ, դասագրքեր: Ադրբեջանի վարած գաղութային քաղաքականության մասին, հետագայում ԼՂԻՄ-ում ստեղծված հատուկ կոմիտեի նախագահ Ա. Վոլսկին գրել է. «Երկրում շրջելիս ես չեմ հանդիպել այնպիսի ավերածությունների, մարդկանց ճակատագրի հանդեպ այնպիսի արհամարհանքի, ինչպես Լեռնային Ղարաբաղում»: Այդ բոլորի նպատակը մարզի հայաթափումն էր: Ադրբեջանը հարուստ փորձ էր ձեռք բերել Նախիջևանում:

Ադրբեջանի իշխանությունների հակահայկական գործունեության հետևանքով տարեցտարի նվազում էր Արցախի հայ բնակչությունը: Ավելին, Հայաստանի իշխանությունների թողտվության պատճառով, նրանք մոլախոտի պես տարածվել էին նաև սահմանամերձ շրջաններում: 1979 թ. մարդահամարի տվյալներով Ամասիայի, Վարդենիսի, Կապանի, Կրասնոսելսկի, Մեղրու, Ազիզբեկովի շրջաններում, ադրբեջանցիները կազմում էին բնակչության մեծամասնությունը: Սա հայկական

իշխանությունների անհեռատես և վտանգավոր քաղաքականության արդյունքն էր:

Արցախն Ադրբեջանին բռնակցելու առաջին իսկ օրվանից բնակչությունը պայքարում էր դրա դեմ: Դեռևս 1920 թ. այդ պայքարը ղեկավարելու համար ստեղծվում է «Ղարաբաղը Հայաստանին» կոմիտե, որը բոլոր շրջաններում ուներ իր բջիջները: Արցախի լեռներում պատասպարվում էին մեծ թվով հայ վրիժառուներ, որոնք փորձում էին կանխել ադրբեջանցիների վայրագությունները: 1930 թ. Շուշիում ձերբակալվեց 17 զինագործ, առգրավվեց 6 թնդանոթ, 30 գնդացիր և այլ զինամթերք: Ժողովուրդը լուռ պատրաստվում էր իշխանությունների դեմ հանդես գալու: Խնածախի բնակիչների պատամբությունն այնպես էր վախեցրել իշխանություններին, որ այն կանխելու համար Բաքվից զորք բերվեց:

Ադրբեջանի իշխանությունները նորանոր միջոցների էին դիմում մարզի բնակչությանը վախի մեջ պահելու համար: Նրանք ժամանակ առ ժամանակ մարզի ղեկավարներին մեղադրում էին նացիոնալիզմի մեջ, հեռացնում աշխատանքից և նրանց հետ բռնաճնշումների ենթարկում հարյուրավոր ակտիվիստների:

Որոշակի նպատակներ հետապնդելով՝ 1949 թ. Հայաստանից մեծ քանակությամբ ադրբեջանցիներ տեղափոխվեցին Ադրբեջան: Սակայն նոր յուրացվող տարածքներում նրանց բնակեցնելու փոխարեն տեղափոխեցին Ղարաբաղի հայկական գյուղերում, ստեղծելով լարված իրավիճակ: Բարեբախտաբար ադրբեջանցիները շուտով հեռացան այդ վայրերից, և հիմնականում վերադարձան Հայաստան:

Ադրբեջանի իշխանությունների հայահալած քաղաքականության դեմ հանդես էին գալիս հասարակության բոլոր խավերը: 1962 թ. Ստեփանակերտից 300 աշխատողների ստորագրությամբ բողոք-նամակ ուղարկվեց Մոսկվայի համապատասխան մարմիններին, որտեղ նկարագրված էր մարզի անմխիթար վիճակը և խնդրում էին շտապ միջոցներ ձեռնարկել: 1965 թ. Արցախի 13 ղեկավար աշխատողներ նամակով դիմեցին ԽՍՀՄ ղեկավարներին, որտեղ կոնկրետ փաստերով ցույց էին տրվում հայահալած քաղաքականության հետևանքները: Նամակ - բողոքներ էին ուղարկվում նաև Երևանից և այլ հայաշատ քաղաքներից: Տասնյակ պատվիրակներ էին մեկնում Մոսկվա, որոնք հետագայում հալածվում էին ադրբեջանցիների կողմից: Ժողովուրդը բռնցքավորվում

էր, Արցախյան ազատագրական շարժումը նոր փուլ թևակոխեց 1980-ական թթ. կեսերին երբ ԽՍՀՄ-ում հռչակվեց «վերակառուցման» քաղաքականությունը: ԼՂԻՄ ժողովուրդը ոտքի ելավ խորհրդային իշխանության տարիներին կրած մարդկային նվաստացումների դեմ, ԼՂ բոլոր շրջաններում ցույցեր ու միտինգներ տեղի ունեցան, տեղական խորհուրդները որոշումներ ընդունեցին Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու համար: 1988 թ. փետրվարի 20-ին համանման որոշում ընդունեց Արցախի մարզխորհրդի նստաշրջանը: Դա նոր փուլ նշանավորեց արցախյան ազատագրական շարժման մեջ: Այդ որոշումները տասնամյակների, եթե ոչ դարերի, ընթացքում արցախցիների ազատագրական պայքարի պոռթկումն էր, մի պայքար, որը մղվեց ոչ միայն Արցախի ազատագրման համար, այլ ամբողջ հայ ժողովրդի ազատագրման, ազգային պետականության վերականգնման համար, խորակունքներից բխող և դարերի ընթացքում ձևավորվող այդ համազգային պայքարը չէր կարող ցանկալի արդյունքի չհասնել: Դրա վկան է Արցախի անկախության 15-ամյա գոյությունը, նրա տնտեսական և մշակութային ձեռքբերումները: